ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 փետրվարի 2023 թվականի N 145 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 322-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում և արտաքին տնտեսական գործունեության սպասարկման կենտրոններում Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հոկտեմբերի 4-ի N 1408-Լ որոշմամբ նախատեսված պետական կառավարման համակարգի մարմինների, պետական մարմինների և կազմակերպությունների կողմից կիրառվող ընթացակարգերում «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի ներդրմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության միջոցառումների իրականացման 2021-2022 թվականների ծրագրի միջոցառումները հաստատելու մասին» N 322-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, 1-ին կետում և որոշմամբ հաստատված հավելվածի (այսուհետ՝ հավելված) վերնագրում «2022» թիվը փոխարինել «2025» թվով.

2) որոշման վերնագրից, 1-ին կետից, հավելվածի վերնագրից և տեքստից հանել «և արտաքին տնտեսական գործունեության սպասարկման կենտրոն-ներում» բառերը.

3) որոշման 3-րդ կետում «յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «յուրաքանչյուր տարվա համար մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը» բառերով.

4) ուժը կորցրած ճանաչել հավելվածի 1.3.1-ինից 1.7-րդ, 2.6-րդ կետերը.

5) հավելվածի 1.8-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«

1.8.	Ընտրված «Մեկ կանգառ, մեկ պատուհան» էտալոնային մոդելի կիրառում ՀՀ պետական սահմանի անցման բոլոր կետերում	30.12.2025 թ.	ՀՀ պետական սահմանի անցման բոլոր կետերում ընտրված «Մեկ կանգառ, մեկ պատուհան» էտալոնային մոդելի կիրառման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ վարչապետի 04.10.2019 թ. N 1408-Լ որոշմամբ նախատեսված պետական կառավարման համակարգի մարմինները և պետական մարմինները	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

».

6) հավելվածի 1.9-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«

1.9.	ՀՀ պետական սահմանի բոլոր անցման կետերի համար անձանց, տրանսպորտային միջոցների, ապրանքների բացթողնման տեխնոլոգիական սխեմաների և սահմանահատման ստանդարտ	30.12.2022 թ.	Համապա-տասխան իրավական ակտերում փոփոխու-թյունների (լրացումների) կատարում	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ ազգային անվտանգության ծառայու-թյուն	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավոր-ման այլ աղբյուրներ

	գործառնական ընթացակարգերի մշակում և ներկայացում հաստատման					

».

7) հավելվածի 2.1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«

2.1.	ՀՀ պետական սահմանի անցման բոլոր կետերում գործող համակարգերի ինտեգրում «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգին	30.12.2025 թ.	ՀՀ պետական սահմանի անցման բոլոր կետերում գործող համակարգերը ինտեգրվել են «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգում	ՀՀ պետական եկամուտների կոմիտե		ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավոր-ման այլ աղբյուրներ

».

8) հավելվածի 2.7-րդ և 2.9-րդ կետերի 3-րդ սյունակում «2022» թիվը փոխարինել «2025» թվով.

9) հավելվածի 2.8-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«

2.8.	ՀՀ արդարադա-տության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության համակարգերի տեխնիկական վերազինում և ինտեգրում «Ռիսկերի կառավարում» համակարգին	30.12.2025 թ.	ՀՀ արդարադա-տության նա-խարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության համակարգերի վերազինում և ինտեգրում «Ռիսկերի կառավարում» համակարգին	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ արդա-րադատու-թյան նախա-րարության հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավոր-ման այլ աղբյուրներ

».

10) հավելվածի 3.1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«

3.1.	ՀՀ վարչապետի 04.10.2019 թ. N 1408-Լ որոշման N 2 հավելվածով սահմանված պետական կառավարման համակարգի, պետական մարմինների և կազմակերպու-թյունների կողմից արտաքին առևտրի շրջանակներում Հայաստանի Հանրապետու-թյան օրենսդրու-թյամբ սահման-ված փաստա-թղթերի ստացման և ներկայացման գործընթացի՝ էլեկտրոնային համակարգի միջոցով իրականացման կազմակերպմանն ուղղված աշխատանքներ	30.12.2025 թ.	Արտաքին առևտրի շրջանակներում ՀՀ օրենսդրու-թյամբ սահ-մանված փաս-տաթղթերի ստացման և ներկայացման գործընթացի իրականացում էլեկտրոնային համակարգի միջոցով	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ վարչապետի 04.10.2019 թ. N 1408-Լ որոշման N 2 հավելվածում ընդգրկված պետական կառավարման համակարգի մարմինները, պետական մարմինները և կազմակեր-պությունները	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավոր-ման այլ աղբյուրներ

».

11) հավելվածի 3.2-րդ կետի 2-րդ սյունակից հանել «և Իրանի Իսլամական Հանրապետության» բառերը.

12) հավելվածը 3.2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.2.1-ին կետով՝

«

3.2.1.	Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային մարմինների հետ ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական էլեկտրոնային տվյալների	30.12.2025 թ.	Ներդրված համակարգ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե		

	փոխանակման համակարգի ներդրում					

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

09.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ